

«ՍովետաՌայ գրականագիտության մատենագիտություն. 1920—1975»:
Կազմող Ռոզա Կարապետյան, պատ. խմբագիր է. Պիլազյան, Նրեան, ՀՍՍՀ
ԿԱ հրատարակչություն, 1982, 1167 էջ:

Հայ գրականագիտական տարբեր կարգի հրատարակությունները մինչև վերջերս մասամբ ներկայացվել են հայ գեղարվեստական գրականությանը (նաև բանահյուսությանը) նվիրված մատենագիտությունների մեջ (օրինակ, Հ. Պետրոսյանի եռահատոր Հայ գրականության բիրիո-գրաֆիայում՝ 1941—1953 թթ., առանձին հայ գրողներին հատկացված մատենագիտական ցանկերում), մասամբ էլ ընդհանուր մատենագիտությունների կազմում: Զուտ գրականագիտական մատենագիտություններ հատուկնեւ են եղել՝ առանձին գրականագետներին նվիրված գրքուկների՝ կենսամատենագիտությունների ձևով, նաև որպես ներգրքային և ներամսագրային մատենագիտություն: Ասպարեզում լկար գրականագիտական մի այնպիսի ամփոփիչ մատենագիտություն, որ իր մեջ ընդգրկեր հայ գրականագիտության անցած ուղու մի շատ թե քիչ նկատելի հատվածը: Այսինքն՝ լուսնինք ժամանակագրական որևէ շրջանի ընթացքում հրատարակված հայ գրականագիտական հոդվածները, գրքերը և այլ նյութեր ամփոփող մի տեղեկատու, իսկ դրա կարիքը երկար ժամանակ է, ինչ զգացվում էր մեր բանասիրության ասպարեզում: Եվ ահա այդ ներկատելի պակասն է, որ լրացրել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնական գրադարանը՝ հրատարակության պատրաստելով ներկա աշխատությունը, որ միաժամանակ այս բնույթի հայերեն առաջին մատենագիտությունն է:

Մեծածավալ այս հատորում բացի զուտ գրականագիտական գրքերից, հոդվածներից, առաջարկներից և այլ կարգի հրապարակումներից՝ միանգամայն ճիշտ մոտեցմամբ ընդգրկված են նաև գրաքննադատական և բանագրագիտական երկեր, ինչպես և բովանդակությամբ գրականագիտությանը բառն, անշուշտ, ճիշտ է ընտրված և ընդհանուր առմամբ արտահայտում է մատենագիտության մեջ մտած նյութերի բնույթը): Ամբողջը ներկայացնում է Հայաստանում և միութենական մյուս հանրապետություններում հայ գրականագիտական մտքի զարգացումը 55 տարվա ընթացքում: Մա պատկառելի ժամանակամիջոց է, և կազմողի՝ Ռ. Կարապետյանի հավաքած նյութն էլ քանակով պատկառելի է՝ շուրջ 18500 անուն գիրք, հոդված, այլ հրատարակություններ:

Նյութերի ընդգրկման բնույթը հիմնականում հետևյալն է. կազմողը վերցրել է ՍՍՀՄ-ի ամբողջ տարածքում (գլխավորապես, իհարկե, Հայաստանում, ապա Ն. Կրասնոսնով, Աղբրեյանում, ՌՍՖՍՀ-ում) հրապարակված հայ գրականագետների գրված պատկանող բոլոր այն նյութերը, որոնք վերաբերում են հայ, ռուս, եվրոպական և այլ գրականությունների, բանահյուսության, գրականության տեսության հարցերին: Բայց այստեղ մի էական հաց է ծառանում մատենագետի (և ոչ միայն նրա) առաջ. մատենագիտության տեսանկյունից (և առհասարակ) ինչ է նշանակում հայ գրականագետ: Օրինակ, ճայ Գրող ըմբռնման սահմանը մատենագիտության մեջ վաղուց ի վեր հստակ է՝ հայ գրող է համարվում նա, որ անկախ իր ազգային ծագումից ստեղծագործում է հայերեն, ինչպես և հայ գրականությունն այն է, որ ստեղծագործվել է հայերեն: Հայ գրականագետ ըմբռնումը մատենագիտության մեջ (և առհասարակ) բոլորովին անհստակ է, չպարզված: Այդ պատճառով հայ գրականագետների ընտրությունը կատարելի թույլ են տրվել անհետևողականություններ, որոնց համար մատենագետին չպիտի կշտամբել, քանի որ այդ հարցը լուծված չէ:

Նկատվում է, որ կազմողը զուտ գրականագիտական մատենագիտության սահմանները տեղ-տեղ լայնացրել է՝ ընդգրկելով, օրինակ, գերազանցապես պատմագիտական արժեք ունեցող գրքեր. ասենք՝ «Ավաթանգեղոսի պատմության հնագույն պատառիկները», «Ղազար Փարպեցու նոյահայտ պատառիկը» հոդվածները և այլն: Երբեմն էլ գրականագիտության սահմանը կարծես ընդլայնված է լեզվաբանության հաշվին. օրինակ, ընդգրկված են գրողների լեզվին նվիրված մի շարք գրքեր: Անշուշտ, այսպիսի դեպքերում կազմողն իր նկատառումներն ու հիմնավորումներն է ունեցել:

Կազմողի առջև ծառացած ամենալուրջ խնդիրներից մեկն էլ եղել է հավաքված հսկայական նյութի դասակարգումը՝ նա ընտրել է ըստ բովանդակության, այսինքն՝ կարգային դասակարգումը և բոլոր աշխատությունները նախ թաժանել է հետևյալ 8 բաժինների. 1. Մարքս-լենինյան գեղա-յկատություն և գրականության տեսություն, 2. Հայ գրականության պատմություն, 3. Ռուս գրա-կանություն, 4. ՍՍՀՄ մյուս ժողովուրդների գրականություն, 5. Արտասահմանյան գրականություն, 6. Գրական կյանք, 7. Գեղարվեստական թարգմանություններ, 8. Հուշագրություններ: Այնուհետև, հայ գրականության պատմության բաժնում առանձնացրել 6 ենթաբաժիններ՝ հին և միջնա-դարյան, նոր՝ սովետական, սիյուրալայ, մանկական և ժողովրդական բանահյուսություն: Իսկ վերոհիշյալ 7 բաժինների և այդ մեկի ենթաբաժինների ներսում նյութը դասավորված է ըստ հեղի-նակների ազգանունների այբբենական կարգի, ամեն մի հեղինակի երկերը՝ մասամբ միայն այբ-բենական կարգով: Սա ընդհանրապես ընդունելի դասակարգում է. ամեն դեպքում, փաստ է, որ այս մատենադիտությունից օգտվող կարողանում է ստանալ գրականագիտական ցանկացած տի-ղեկություն: Սա ամենակարեւորն է: Դրան մեծապես օգնում է վերջում կցված «Հեղինակների և անձնանունների ցանկը»:

Առհասարակ, կարգային դասակարգման գլխավոր թերությունն այն է, որ հաճախ որեւէ մի աշխատություն համապատասխանում է ոչ թե մեկ, այլ մի քանի բաժնի: Այս թերությունը, սո-սիորաբար, հաղթահարվում է հղումներով կամ միևնույն աշխատությունը երկու և ավելի բաժին-ներում ներկայացնելու միջոցով և կամ էլ՝ թե՛ մեկի, թե՛ մյուսի միջոցով: Այս վերջին լավու-զույն եղանակն է ընտրել ներկա մատենագիտության հեղինակը: Օրինակ, հայ գրականության պատմության բաժնում ներկայացված մի շարք գործեր դրված են նաև գրականության տեսու-թյան բաժնում. ինչպես՝ Գ. Լեոնյանի «Աղուղական տաղաչափությունը և Սայաթ-Նովան» կամ Գ. Հակոբյանի «Շարականների սեռը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ» հոդվածները հիմնականում նկարագրված են հայ հին և միջնադարյան գրականության պատմության ենթու-բաժնում, լրացուցիչ նշված են նաև գրականության տեսության բաժնում՝ համապատասխան հղումներով դեպի հիմնական նկարագրությունները: Այսպիսի լրացուցիչ նշումները շատ են և նրանք մեծօրոգում են մատենագիտության տեղեկատվական հնարավորությունները: Իհարկե, կան նաև մտածել տվող կետեր. օրինակ, նույն Գ. Հակոբյանի «5—7-րդ դարերի շարականների սո-վետը» կամ Ա. Ղազինյանի «Դիմառությունը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ» հոդ-վածները, ըստ երևույթի, լավ կլինեն նույնպես լրացուցիչ ներկայացնել գրականության տեսու-թյան բաժնում: Բայց և այսպիսի դեպքերն անխուսափելի են նման մի ծավալուն մատենագիտու-թյան մեջ: Ինչ վերաբերում է վերև նշված բաժինների համակարգին, ապա կասկած է առաջաց-նում միայն Հանրապետությանը բաժնի անհրաժեշտությունը. արդյոք հնարավոր չէ՞ր նրանում ընդգրկված նյութեր տեղադրել Հայ գրականության պատմության բաժնի համապատասխան են-թաբաժիններում:

Ամեն մի մատենագիտություն, անշուշտ, նախ տեղեկատվություն է, այլ խոսքով՝ ամենա-կարեւորը որեւէ մատենագիտության համար, նրա տեղեկանքային ծավալն է, հնարավորություն-ներն ու վստահելիությունը: Այս տեսակետից Ռ. Կարապետյանը հաջողությամբ կատարել է իր առջև դրված այդ գլխավոր խնդիրը:

Նյութերի նկարագրությունները նույնպես պետք է միանգամայն հաջողված համարել: Դր-րանք պարզ են, ամեն մի ընթերցողի, օգտվողի համար մատչելի: Կազմողը նյութերի նկարա-գրության համար իբրեւ հիմք ընդունել է Ն. Նիկիֆորովսկայայի կազմած և 1964-ին հրատարակ-ված կանոնները, որոնք Ռ. Կարապետյանը՝ ինքը մասամբ լրացրել է և մտնավանդ պարզեցրել: Իրողություն չունենք, ավելին՝ կառույրակիներ մեր մյուս մատենագետներին և մատենագի-տական հիմնարկներին ընդօրինակել նկարագրության այս բնույթը, մանավանդ նրա պարզու-թյունն ու մատչելիությունը՝ հրաժարվելով ամեն տեսակ արհեստական խրթնարանություններից, որոնք այժմ մեղանում, ցավոք, տարածված են և որոնք միայն դժվարամուտելի են դարձնում ամեն մի մատենագիտություն:

Ժամանակագրական այս կարգի մատենագիտությունը նաև պատմություն է: Եվ ահա նրա շնորհիվ մեր առջևով դրվագ առ դրվագ անցնում են հայ գրականագիտության 55 հետաքրքու-կան տարիները. օրինակ 20—30-ական թվականների ոգեւորություններն ու սայթաքումները՝ կենտրոնում է Զարենցը, թե՛ իբրեւ բանաստեղծ ժամանակակից քննադատների գործերում, թե՛ որպես քննադատ ու գրականագետ Ասյա և՛ Ս. Զորյան, Գ. Դեմիրճյան, Արով, Բակունց, Մա-հարի, Արեղյան, Գյուլիբեկյան, Ռ. Ավդալբեգյան, Ռ. Աթայան, Վանանդեցի, Աս. Ասատրյան, Ն. Դարսոյան և շատ ուրիշներ. բախումներ, բանավեճեր... Ապա 50-ական թվականներից գա-

լիս են գրողների և գրականագետների նոր անուններ, որոնք այժմ արդեն հայտնի են: Իհարկե, մատենագիտության պատմական այս կողմն ավելի լավ կդիտվեր, եթե հայ գրականությունն պատմության րաժնում նյութերի դասավորությունը լիներ ըստ հրապարակման ժամանակագրության, չափ այդ դեպքում չէր լինի ներկայացված աշխատությունների ժամանակագրական կարգը բուրժուական դարձյալ (հին և միջնադարյան, նոր, սովետական) և կցրվեին տարբեր տարիների մեջ միևնույն հեղինակի երկերը: Մինչդեռ եղած այս կառուցվածքով մատենագիտության պատմականությունը ընդգծված դրսևորվում է նաև նրանով, որ այսօր, տարիներ անց, 20—30-ական, նաև 40—50-ական թվականներից մեկ համար պարզվում է առանձին գրականագետների հետաքրքրությունների շրջանակը, նաև նրանցից ամեն մեկի քաղաքացիական կերպարի որոշ գծեր...

Այս մատենագիտությունը նրա պատմականության և համեմատական լրիվության տեսակետից արժեքավորելիս՝ չի կարելի չնկատել մի թերություն, որ իրոք լուրջ է թվում. այստեղ չեն արտահայտվել 20-ական, մանավանդ 30-ական թվականների գրականագիտական շատ հոգվածներ, որոնք գրվել են հայտնի հեղինակների՝ գրողների, գրականագետների կողմից՝ Զարենյի, Ռակունցի, Թոթովենցի, Մահարու, Նորենցի, Դաշտենցի և այլոց մասին և արտահայտում են յուրաքանչյուր ժամանակների բնորոշ որոշ միտումներ, այնպես էլ հոգվածագիտների քաղաքացիական և բարոյական որոշ հատկանիշները: Չենք կարծում, որ կազմողի ձեռքի տակ դրանք չեն եղել: Աշխատության մեջ նշված են կազմողի օգտագործած մատենագիտական աղբյուրները (հրատարակված նաև 1960—1970-ական թթ.), իսկ նրանց մեջ վերահիշյալ հոգվածները տեղ են գտել: Ինչու՞ են դուրս թողնվել այս մատենագիտությունից:

Մատենագիտություն կազմելը ղեկավարին, հաճախ տաժանակիր աշխատանք է: Մեր մեծ մատենագետ Ա. Ղազիկյանը գրում էր, որ իր իմացած հայերեն բառերի մեջ չի գտնում այնպիսիներ, որոնք ճիշտ բնորոշեն մատենագիտություն կազմելու ամբողջ ղեկավարությունը: Ահա այնպիսի ղեկավարություն է հաղթահարել Ռ. Կարապետյանը և հաղթահարել է վարպետորեն, մասնագիտական րարձր մակարդակով: Հայտնի բան է նաև, որ չի կարող լինել լիակատար և լիովին անթիքի մատենագիտություն, կարևորը պակասներն ու թերությունները նվաղագույնի հասցնելն է, որ և հմտորեն արել է ներկա մատենագիտության հեղինակը:

Այժմ, երբ այս հսկայական գործը կատարելու ուղին երևում կազմողն արդեն անցել է իր մարտինը և, հավանաբար, պիտի ձեռնարկի (կամ ձեռնարկել է) հաջորդ տարիների մատենագիտության կազմման գործին, կարծում ենք ձեռք բերված փորձը, արտահայտված նկատառումները նպաստ կբերեն հաջորդ հատորն ավելի կատարյալ հրատարակելու:

ՌԱՅԼԱՅԻԼ ԻՇԽԱՆՅԱՆ.

Բաճախիական գիտությունների դպրոց: